ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

5 սեպտեմբերի շաբաթ 2026
տպագրության ԺԵ տարի

111
(3320)

100 դրամ

քաղաք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԻՆՉ ԽՄՈՐՈՒՄՆԵՐ ԵՆ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇՈՒՐՋ

ՀՀ քաղաքական դաշտում շարունակում է ինտրիգային մնալ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի առաջիկա ընտրությունների հարցը:

Հոկտեմբերի 25-ին Կոտայքի մարզի մի շարք խոշոր համայնքներում նախատեսված են համայնքի ղեկավարի ընտրություններ, եւ իշխանական «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունում այս օրերին ակտիվորեն քննարկվում են թեկնածուների հարցերը եւ չեն գտնում բոլոր տեղերում արժանի փոխարինողներ: Հատկապես մեծ հետաքրքրություն է առաջացրել Աբովյանի քաղաքապետի թեկնածուի ընտրությունը:

«Ժողովուրդ» օրաթերթի իշխանական աղբյուրների փոխանցմամբ՝ այս պահի դրությամբ իշխանության ներսում առավել հավանական տարբերակը Էդուարդ Բաբայանի թեկնածությունն է: ՔՊ-ում վերլուծել են, որ Բաբայանը Աբովյանում ունի մեծ ճանաչելիություն եւ ընտրողների շրջանում անհրաժեշտ աջակցություն, ինչն էլ կարող է ՔՊ-ին հնարավորություն տալ քաղաքապետի ընտրություններում հաղթանակ ապահովել: Այլ պարագայում էլի կպարտվի ՔՊ-ն այդ համայնքում:

Էդուարդ Բաբայանն այժմ ղեկավարում է Աբովյան համայնքը: 2021 թվականի դեկտեմբերին նա ընտրվել էր Աբովյանի համայնքապետ՝ ստանալով 14 մանդատ, այն դեպքում, երբ ՔՊ-ի իշխանական թեկնածուն՝ Պավել Ցուգունյանը, իր ողջ ռեսուրսներով ստացել էր 12 մանդատ:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՔՊ-ի տարածքային կառույցներին, իհարկե, այս փուլում հանձնարարվել է ներկայացնել երկուական թեկնածու, որից հետո կուսակցության համապատասխան մարմինը պետք է ընտրություն կատարի:

Սակայն իշխանական մեր աղբյուրները պնդում են, որ, չնայած թեկնածուների ընտրության պաշտոնական գործընթացը դեռ չի ավարտվել, ներքին քննարկումներում նախապատվությունը կարծես թե տրվում է հենց Էդուարդ Բաբայանին՝ որպես կարող թեկնածու:

Միեւնույն ժամանակ, նկատենք, որ այս պահի դրությամբ ՔՊ-ն պաշտոնապես չի հայտարարել Աբովյանի համայնքապետի թեկնածուի անունը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ իշխանությունները շարունակում են քննարկել Ռուսաստանում ՀՀ նոր դեսպանի թեկնածության հարցը: Հիշեցնենք՝ Նիկոլ Փաշինյանը հետ է կանչել ՌԴ-ում ՀՀ դեսպան Գուրգեն Արսենյանին: Իշխանական շրջանակներում որոշումը պայմանավորում են նրանով, որ Արսենյանի աշխատանքը չի արդարացրել ակնկալիքները, մասնավորապես հայ-ռուսական հարաբերությունների ուղղությամբ: Մինչդեռ դրանք բարելավելու ուղղությամբ անձամբ Փաշինյանի ջանքերը դեռ արդյունք չեն տալիս, հետեւաբար դեսպանի աշխատանքը ոչինչ է այդ հարթության մեջ: Մեր աղբյուրների փոխանցմամբ՝ նոր դեսպանի թեկնածուների թվում Նիկոլ Փաշինյանը դիտարկել է նաեւ արդեն նախկին Անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանին: Սակայն վերջինս կտրականապես հրաժարվել է Մոսկվա մեկնելու եւ դեսպանի պաշտոնը ստանձնելու առաջարկից: Այս պահին նոր դեսպանի որոնումները շարունակվում են: «Ժողովուրդ» օրաթերթի իշխանական աղբյուրների փոխանցմամբ՝ Փաշինյանը ցանկանում է Մոսկվա գործուղել ոչ թե պարզապես դիվանագետի, այլ քաղաքական թիմից այնպիսի անձի, որը կկարողանա տարբեր մակարդակներում արդյունավետ աշխատել ռուսական կողմի հետ եւ անհրաժեշտության դեպքում կարգավորել Երեւան-Մոսկվա հարաբերություններում առաջացող խնդիրները:



Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերության պետականացման գործընթացը մտնում է վճռորոշ փուլ: Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունը շուտով e-draft հարթակում կտեղադրի ՀԷՑ-ին վերաբերող նախագիծը: Դրան կհաջորդի նաեւ հանրային քննարկում, որից հետո փաստաթուղթը կմտնի Կառավարության նիստի օրակարգ: Սակայն Կառավարության որոշմամբ գործընթացը չի ավարտվի: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ դրանից հետո մի քանի ամիս կտեւի ընկերության գնահատման գործընթացը: Հենց այդ գնահատման արդյունքում էլ որոշվելու է պետության կողմից վճարվելիք փոխհատուցման չափը: Այսինքն՝ պետությունը նախ պետք է ստանա ՀԷՑ-ի ամբողջական վերահսկողությունը, այնուհետեւ գնահատվի ընկերությունը, եւ արդեն դրա հիման վրա սեփականատիրոջը կտրամադրվի փոխհատուցում: «Ժողովուրդ» օրաթերթի կառավարական աղբյուրների փոխանցմամբ՝ վերջնական փուլում նախատեսվում է ՀԷՑ-ը պետական ռեգիստրում գրանցել որպես 100 տոկոս պետական սեփականություն:



Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

«Ժողովուրդ» օրաթերթը շարունակում է ուսումնասիրել պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների եւ ծախսերի վերաբերյալ հայտարարագրերը եւ դրանք ներկայացնել հանրությանը: Այս անգամ ուսումնասիրել ենք ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Աննա Կարապետյանի կենսագրությունն ու ունեցվածքը՝ պաշտոնը ստանձնելու պահից մինչեւ 2025 թվականը: Աննա Կարապետյանը Արդարադատության նախարարի տեղակալի պաշտոնը ստանձնել է 2024 թվականի դեկտեմբերի 17-ին: Մինչ այդ նա տարբեր պաշտոններ է զբաղեցրել պետական համակարգում եւ միջազգային կազմակերպություններում: 2024 թվականի օգոստոսից Կարապետյանը եղել է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի Ժողովրդավարական կառավարման բաժնի՝ արդարադատության ոլորտի համակարգող: 2023-2024 թվականներին նա աշխատել է Արդարադատության նախարարության «Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամում՝ որպես միջազգային-իրավական հարցերով փորձագետ: 2022-2023 թվականներին Կարապետյանը եղել է Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի միջազգային համագործակցության վարչության պետ: Իսկ 2016-2022 թվականներին աշխատել է Արդարադատության նախարարության միջազգային իրավական համագործակցության վարչության արտաքին կապերի բաժնում՝ սկզբում որպես առաջին կարգի մասնագետ, ապա՝ առաջատար եւ գլխավոր մասնագետ, իսկ հետագայում՝ բաժնի պետ:



Մանրամասները՝ ArmLur.am կայքում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ԱՅՍ ԱՄԵՆԻՑ ՏՈՒԺՈՒՄ Է ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ»

ArmLur.am-ը զրուցել է ԱԺ պատգամավոր Լեւոն Քոչարյանի հետ: Անդրադարձել ենք Ռոբերտ Քոչարյանին ուղղված Պուտինի շնորհավորանքին, Քոչարյանների դեմ մեղադրանքներին եւ այլն:

- Եկել եք Ձեր աջակցությունը հայտնելու: Ինչո՞ւ որոշեցիք այստեղ լինել, ինչպե՞ս եք գնահատում իրավիճակը եւ ի՞նչ սպասելիքներ ունեք դատարանից:

- Դատարանից արդարադատության սպասելիքներ միշտ կան, բայց տեսնում ենք, որ արդարադատություն չկա: Ամենաբարձր մակարդակով հրահանգներ են տրվում դատարաններին՝ այսպես կամ այնպես որոշումներ կայացնելու: Հետեւաբար, առանձնապես սպասելիք դատարանից չկա:

Այստեղ եմ, որովհետեւ Գագիկ Ծառուկյանը ենթարկվում է ուղիղ քաղաքական հետապնդման: Ինչպես գիտեք, նաեւ ընտրությունների ժամանակ Բարգավաճ Հայաստանից կոնկրետ ձայներ են գողացվել: Այստեղ եմ աջակցելու թե՛ Գագիկ Ծառուկյանին, թե՛ բոլոր քաղբանտարկյալներին:

Սա մեկ մարդու կամ մեկ անձի հարց չէ: Իմ ընկալմամբ՝ այսօր քաղբանտարկյալ կարող է համարվել նաեւ ձեր հայրը, ձեր եղբայրը, Հանրապետության երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը եւ նրա որդին:

- Ի՞նչ կարող եք ասել նրանց վիճակի մասին: Այցելե՞լ եք նրանց, ի՞նչ են պատմում:

- Այո՛, այցելել եմ: Հորս կարողանում եմ այցելել, իսկ եղբորս այցելելն ինձ արգելված է: Հորս այցելել եմ նաեւ նրա ծննդյան օրը՝ օգոստոսի 31-ին: Ընդհանուր առմամբ, տարբեր հարցերի շուրջ խոսել ենք, տարբեր բաներ ենք քննարկել:

- Դուք նաեւ նշեցիք, որ միջազգային կառույցներն ու դեսպանատները հաճախ չեն արձագանքում տեղի ունեցող գործընթացներին: Ի՞նչ եք կարծում՝ ինչո՞ւ:

- Նախ՝ այս լկտի ապօրինությունների մասին պետք է շատ խոսել եւ բարձրաձայնել: Ինչքան էլ միջազգային կառույցներն ու դեսպանատները փորձեն այս ամեն ինչը չտեսնելու տալ, կարծում եմ՝ մեր խնդիրն է ամեն կերպ բարձրաձայնել տեղի ունեցողը եւ նրանց հետ այնպիսի խոսակցություններ ունենալ, որ նրանք չկարողանան այսպես «ջայլամային քաղաքականություն» վարել:

Մի կողմից՝ նրանք ողջունում են իշխանությունների՝ դեպի Եվրոպա գնալու ցանկությունը, մյուս կողմից՝ այն, ինչ տեղի է ունենում Հայաստանում, շատ ուղիղ ձեւով հակասում է եվրոպական արժեքներին, ժողովրդավարական սկզբունքներին, օրենքի գերակայությանը եւ խոսքի ազատությանը:

Երբ այս ամենն այդքան ակնհայտ է, բայց միեւնույն ժամանակ չի նկատվում, շատ լուրջ հարցեր եւ կասկածներ են առաջանում ամբողջ այս գործընթացի վերաբերյալ:

- Օրերս Ռոբերտ Քոչարյանի ծննդյան օրն էր: Նրան բավականին ջերմ շնորհավորանք էր հղել Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինը: Որպես քաղաքական գործիչ՝ ինչպե՞ս եք գնահատում այդ քայլը:

- Նախ՝ կարծում եմ, սա խոսում է Ռուսաստանի նախագահի բարձր մարդկային եւ տղամարդկային հատկանիշների մասին:

Իսկ քաղաքական մասով արդեն կարող ենք տարբեր ենթադրություններ անել: Ենթադրություններ անողները, կարծում եմ, թող իրենք էլ անեն այդ ենթադրությունները:

Ամեն դեպքում, նույնիսկ մարդուն բանտում գտնվելու պայմաններում այդ շնորհավորանքը եղել է: Բացի դրանից՝ նաեւ բազմաթիվ այլ շնորհավորանքներ են եղել, եւ դրա համար ես միայն շնորհակալ եմ:

- Իսկ ի՞նչ ակնկալիքներ ունեք Հայաստանի եւ Ռուսաստանի հարաբերությունների հետ կապված: Կարծում եք՝ հնարավո՞ր են էական փոփոխություններ:

- Իմ ակնկալիքն այն է, որ մեր հարաբերություններում առկա խնդիրները հարթվեն: Այստեղ խոսքը Նիկոլ Փաշինյանի եւ Վլադիմիր Պուտինի հարաբերությունների մասին չէ, այլ հայ ժողովրդի եւ Ռուսաստանի ժողովրդի հարաբերությունների մասին:

Հույս ունեմ, որ այդ հարաբերությունները կկարգավորվեն, եւ այն խոչընդոտները, որոնք, իմ խորին համոզմամբ, առաջացել են մեր այսօրվա իշխանությունների վարած քաղաքականության արդյունքում, կվերանան:

Ի վերջո, այս ամենից տուժում է մեր ժողովուրդը, եւ ես հույս ունեմ, որ առկա խնդիրները կլուծվեն:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ Է ՏՎԵԼ

Եվրոպական խորհրդարանի Միջազգային առեւտրի հանձնաժողովը (INTA) հավանություն է տվել Հայաստանից Եվրոպական Միություն ներմուծվող ապրանքների լայն շրջանակի համար մաքսատուրքերի ժամանակավոր վերացմանը՝ Ռուսաստանի կողմից հայկական արտահանման նկատմամբ սահմանված առեւտրային սահմանափակումների հետեւանքով ստեղծված իրավիճակում:

Բրյուսելում «Արմենպրես»-ի թղթակցի փոխանցմամբ՝ Եվրոպական հանձնաժողովի ներկայացրած առաջարկը սեպտեմբերի 3-ին ընդունվել է առանց փոփոխությունների՝ 35 կողմ, 2 դեմ եւ 3 ձեռնպահ ձայներով:

Առաջարկի համաձայն՝ Եվրոպական միությունը նախատեսում է երկու տարի ժամկետով վերացնել հայկական մի շարք ապրանքների նկատմամբ կիրառվող մաքսատուրքերը:

Միաժամանակ նախատեսվում է առանց մաքսատուրքի ներմուծման քվոտաներ սահմանել հայկական գյուղատնտեսական ութ տեսակի արտադրանքի համար: Դրանց թվում են խաղողը, ծիրանը, կեռասը, դեղձը եւ վարունգը:

Նախագիծը նախատեսում է նաեւ պաշտպանական մեխանիզմներ, որոնք անհրաժեշտության դեպքում հնարավորություն կտան Եվրամիությանը միջամտել, եթե Հայաստանից ներմուծման աճը բացասական ազդեցություն ունենա եվրոպացի արտադրողների վրա:

Այս քայլը պայմանավորված է 2026 թվականի մայիսից Ռուսաստանի կողմից հայկական արտահանման մի շարք կարեւոր ապրանքատեսակների նկատմամբ կիրառվող սահմանափակումներով: Դրանք վերաբերում են, մասնավորապես, ալկոհոլային խմիչքներին, հանքային ջրերին, մրգերին եւ բանջարեղենին, ինչպես նաեւ Ռուսաստանի տարածքով դրանց տարանցմանը:

Ըստ Եվրոպական հանձնաժողովի՝ այդ սահմանափակումները խաթարել են Հայաստանի ավանդական մատակարարման շղթաները եւ զգալիորեն սահմանափակել երկրի հասանելիությունը ավանդական արտահանման շուկաներին: Իրավիճակը հատկապես ծանր ազդեցություն է ունեցել փոքր եւ միջին ձեռնարկությունների, ինչպես նաեւ գյուղատնտեսական արտադրողների վրա՝ միաժամանակ մարտահրավերներ ստեղծելով Հայաստանի տնտեսական դիմակայունության համար:

ԵՄ-ն նախաձեռնությունը դիտարկում է որպես հայկական տնտեսությանն աջակցելու եւ արտահանողների համար ԵՄ շուկա մուտքի լրացուցիչ հնարավորություններ ստեղծելու ժամանակավոր միջոց:

Առաջարկի շուրջ հաջորդ քվեարկությունը նախատեսվում է Եվրոպական խորհրդարանի սեպտեմբերյան լիագումար նստաշրջանում՝ Ստրասբուրգում:

Եվրախորհրդարանի հաստատումից հետո անհրաժեշտ կլինի նաեւ ԵՄ խորհրդի պաշտոնական հաստատումը: Կանոնակարգը ուժի մեջ կմտնի Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

Հիշեցնենք, որ Եվրոպական միության խորհուրդը սեպտեմբերի 2-ին հավանություն էր տվել հայկական արտադրանքի համար առեւտրի ժամանակավոր ազատականացման միջոցներ սահմանելու առաջարկին եւ նախագիծն ուղարկել էր Եվրախորհրդարանի հաստատմանը:

ՆԱԽԿԻՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԸ՝ ՏԵՂԱԿԱԼ

«Ժողովուրդ» օրաթերթը շարունակում է ուսումնասիրել պաշտոնատար անձանց ներկայացրած գույքի, եկամուտների, ծախսերի եւ շահերի հայտարարագրերը: Այս անգամ ներկայացնում ենք արդեն նոր պաշտոն ստացած, նախկին պատգամավոր Հերիքնազ Տիգրանյանի՝ 2025 թվականի հայտարարագիրը:

Հիշեցնենք, որ ավելի վաղ գրել էինք, որ վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ՝ Հերիքնազ Տիգրանյանը նշանակվել էր ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար՝ Լիլիթ Մակունցի տեղակալի պաշտոնում:

Մինչ այդ նա զբաղեցնում էր Ազգային ժողովի պատգամավորի պաշտոնը, որը ստանձնել էր 2021 թվականի օգոստոսի 2-ին:

Նրա 2025 թվականի հայտարարագրի համաձայն՝ Տիգրանյանն ունի երկու անշարժ գույք՝ Երեւան քաղաքի Արաբկիր վարչական շրջանում գտնվող բնակարան եւ ավտոկայանատեղի: Երկու գույքն էլ համատեղ սեփականության իրավունքով ձեռք է բերվել 2019 թվականի մարտի 20-ին: 2025 թվականին նա նոր անշարժ գույք չի ձեռք բերել եւ ունեցած գույքից որեւէ մեկը չի օտարել:

Տիգրանյանը հայտարարագրել է նաեւ 1994 թվականի արտադրության Mercedes-Benz մակնիշի ավտոմեքենա, որը ձեռք է բերել դեռեւս 2011 թվականի ապրիլի 23-ին:

Նախկին պատգամավորի բանկային հաշիվներում 2025 թվականի տարեվերջին առկա է եղել ընդհանուր առմամբ մոտ 3 մլն 972 հազար դրամ: Տարվա սկզբին նրա հաշիվներում առկա գումարները զգալիորեն ավելի փոքր են եղել: Միաժամանակ, տարվա սկզբին հայտարարագրված 2 մլն 300 հազար դրամ կանխիկ գումարը տարեվերջին կազմել է 1 մլն 500 հազար դրամ:

2025 թվականի ընթացքում Հերիքնազ Տիգրանյանի ընդհանուր եկամուտը կազմել է 18 մլն 358 հազար 919 դրամ: Դրանից 16 մլն 303 հազար 116 դրամը ստացել է Ազգային ժողովի աշխատակազմից՝ որպես աշխատանքի վարձատրություն եւ դրան հավասարեցված այլ վճարումներ: Եվս 2 մլն 22 հազար 563 դրամ նա ստացել է Պետական եկամուտների կոմիտեից՝ որպես այլ եկամուտ, իսկ 33 հազար 240 դրամ՝ Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանից:

2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Տիգրանյանն ունեցել է նաեւ 19 մլն 253 հազար 183 դրամ վարկի մայր գումարի մնացորդ: Հայտարարագրում նշված է, որ վարկի նպատակային նշանակությունը բնակարանի ձեռքբերումն է:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԻՐԱՎԻՃԱԿ

2 ԱՄՍՈՎ

2026 թվականի հունիսի 5-ին դատավոր Վահե Ռոլմազյանը ՀՀ տրանսպորտի եւ կապի նախկին նախարար Գագիկ Բեգլարյանին մեկ ամսով կալանավորել էր: Արդյունքում, մեկամսյա կանալքի ժամկետը լրացել էր, եւ նախքննական մարմինը կրկին միջնորդություն էր ներկայացրել դատարան եւ Հակակոռուպցիոն դատարանի դատավոր Արամ Գրիգորյանն էր կալանքը 2 ամսով երկարաձգել: Եւ ահա Գագիկ Բեգլարյանի 2-ամսյա կալանքի ժամկետը եւս լրացել էր, եւ երեկ ԱԱԾ մեկուսարանից Գագիկ Բեգլարյանին կրկին տարել են դատարան, եւ հակակոռուպցիոն դատարանի դատավոր Տիգրան Դավթյանը նրա կալանքը 2 ամսով երկարաձգել է: Վերջինս մեղադրվում է պաշտոնեական լիազորությունների չարաշահման եւ առանձնապես խոշոր չափերի փողերի լվացման մեջ:

Ք. Մ.

ՎԵՐԱԴԱՐՁՎԵՑ

Սյունիքի մարզի դատախազությունը, պետական (համայնքային) շահերի պաշտպանության լիազորության շրջանակում, ուսումնասիրել է Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Սիսիան քաղաքի «Մայիսի 28» զբոսայգու տարածքում գտնվող հողամասերը տարբեր անձանց տրամադրելու վերաբերյալ փաստաթղթերը: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Սիսիան քաղաքի «Մայիսի 28» զբոսայգու տարածքում գտնվող՝ 28/71 հողամաս հասցեում գտնվող՝ 0,05308 հա մակերեսով հողատարածքը, օրենքի պահանջների խախտմամբ, կառուցապատման իրավունքով հատկացվել է ֆիզիկական անձի: Դատախազի կողմից միջնորդագիր է հասցեագրվել Սիսիան համայնքի ղեկավարին՝ Սիսիան համայնքի եւ կառուցապատողի միջեւ 2009 թվականի հունիսի 11-ին կնքված կառուցապատման իրավունքը դադարեցնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ: Միջնորդագրի հիման վրա Սիսիանի համայնքապետարանի իրավասու մարմինների կողմից ձեռնարկված միջոցառումների արդյունքում, Կադաստրի կոմիտեում դադարեցվել է Սիսիան համայնքի «Մայիսի 28» զբոսայգում գտնվող՝ 0,05308 հա մակերեսով, 997 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով հողամասի նկատմամբ գրանցված կառուցապատման իրավունքը. հողամասը վերադարձվել է Սիսիան համայնքի տիրապետմանը: Նշենք, որ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի «Մայիսի 28-ի» անվան զբոսայգին զբաղեցնում է 9595.68 քմ տարածք, որտեղ գտնվող հողատարածքները կառուցապատման իրավունքով կնքված պայմանագրերով հատկացվել են 17 անձի: Դատախազական ներգործության արդյունքում՝նշված այգում գտնվող հողատարածքներից առ այսօր Սիսիան համայնքին վերադարձվել է 6 անձի տրամադրված 4103,733 քմ մակերեսով 8 հողատարածք: Դրանք են՝

0,05308 հա մակերեսով հողամասը,
0,0450 հա մակերեսով հողամասը,
0,05 հա մակերեսով հողամասը,
0,0451 հա մակերեսով հողամասը,
0,08 հա մակերեսով հողամասը,
0,02 հա մակերեսով հողամասը,
0,0402 հա մակերեսով հողամասը,
0,13 հա մակերեսով հողամասը:

11 անձի տրամադրված 12 հողատարածքները համայնքին վերադարձնելու աշխատանքներն ընթացքի մեջ են:

ՀԵՂՈՒԿ ԳԱԶ

Ո՞Վ Է ԹԱԼԱՆՈՒՄ ՎԱՐՈՐԴԻ ԳՐՊԱՆԸ

Հեղուկ գազի գինը թռչում է, իշխանությունը՝ ձեռքերը լվանում. ո՞վ է թալանում վարորդի գրպանը:

Հայաստանում հեղուկ գազի շուկայում ստեղծված իրավիճակը գնալով ավելի շատ հարցեր է առաջացնում, քան պատասխաններ տալիս: Գազի գինը վերջին ամիսներին կտրուկ տատանվել է՝հասնելով անգամ 260-300 դրամի, իսկ այսօր, ըստ ArmLur.am-ի տեղեկությունների, մեկ լիտրի գինը մոտ 240 դրամ է:

Թվերը, սակայն, այս պատմության միայն մի մասն են: Ավելի ուշագրավ է այն, թե ինչպես են պետական կառույցները փորձում բացատրել թանկացումը եւ, ամենակարեւորը, ով է իրականում պատասխանատու շուկայում ստեղծված իրավիճակի համար:

Հիշեցնենք՝ դեռ մայիսին էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը հեղուկ գազի թանկացումը պայմանավորել էր Լարսի փակ լինելու եւ դրա հետեւանքով առաջացած լոգիստիկ խնդիրների հետ: Այսինքն՝ իշխանության ներկայացրած հիմնական պատճառը արտաքին էր՝ճանապհների եւ մատակարարումների հետ կապված:

Սակայն այստեղ մի քանի հարց է առաջանում: Եթե գնի կտրուկ բարձրացման պատճառը Լարսի փակ լինելն էր, ապա ինչո՞ւ պետությունը չուներ այլընտրանքային մատակարարման մեխանիզմներ: Եվ եթե այսօր մատակարարումների աշխարհագրությունն ու աղբյուրները փոխվում են, ինչո՞ւ վերջնական գինը շարունակում է մնալ բարձր:

ArmLur.am-ի տեղեկություններով՝ հեղուկ գազի շուկայում վերջին շրջանում փոխվել է նաեւ մատակարարումների կառուցվածքը. Իրանի ուղղությունն ավելի մեծ դեր է ստացել, մինչդեռ ռուսական ուղղությունից մատակարարումների ծավալները նվազել են, իսկ այս տարի Ռուսաստանից համապատասխան մատակարարումներ չեն իրականացվել:

Ստացվում է՝ շուկան վերադասավորվում է, սակայն դրա ազդեցությունը սպառողի գրպանի վրա դրական առումով չի զգացվում:

Ավելին՝ այս պատմության ամենահետաքրքիր դրվագը վերաբերում է հենց պետական վերահսկողությանը:

Երբ փորձ է արվում հասկանալ՝ արդյոք շուկայում ուսումնասիրություն իրականացվո՞ւմ է, արդյոք գների ձեւավորման մեջ կան մրցակցային խնդիրներ, պատասխանը, մեղմ ասած, տարակուսելի է:

ArmLur.am-ը փորձել է Մրցակցության եւ սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովի մամուլի քարտուղար Անի Սմբատյանից պարզել, թե ինչ իրավիճակ է շուկայի ուսումնասիրության արդյունքները: Վերջինս հայտարարեց, թե ներկայումս հանձնաժողովը հեղուկ գազի հետ կապված հարցերով չի զբաղվում:

Այսինքն՝իրավիճակը հետեւյալն է.

Սա արդեն ոչ միայն տնտեսական, այլեւ կառավարման հարց է:

Ո՞վ պետք է ուսումնասիրի՝ արդյոք ներմուծման գինը համարժեք է վերջնական վաճառքի գնին: Ո՞վ պետք է պարզի, թե ինչ ծախսերի հաշվին է մեկ լիտրի գինը հասնում 240-300 դրամի: Ո՞վ պետք է վերահսկի, որ արտաքին գործոնները չդառնան շուկայում անհիմն թանկացումների արդարացում: Եւ ամենակարեւորը՝ եթե պետական մարմինները նախապես գիտեն, որ ձմռան ամիսներին հեղուկ գազի գինը պարբերաբար բարձրանում է, ինչո՞ւ այդպես էլ չի ստեղծվել կանխարգելիչ որեւէ արդյունավետ մեխանիզմ:

Այստեղ իշխանության համար ամենահարմար տարբերակը, կարծես, պատասխանատվությունը տարբեր ուղղություններով բաժանելն է: Երբ գինը բարձրանում է՝ պատճառը միջազգային շուկան է, Լարսը, լոգիստիկան կամ մատակարարումները: Բայց երբ հարց է տրվում՝ կոնկրետ ո՞վ է վերահսկում շուկան եւ ո՞վ է պատասխանատու, պատասխանը չկա:

Հեղուկ գազի շուկայի շուրջ ստեղծված իրավիճակը նաեւ ցույց է տալիս, թե որքան խոցելի է Հայաստանի տնտեսությունը մատակարարման մեկ ուղղության կամ լոգիստիկ խնդիրների նկատմամբ: Եթե մեկ ճանապարհի փակվելը կարող է շուկայում այսպիսի գնային ցնցում առաջացնել, ապա հարց է՝ի՞նչ է արել կառավարությունը նման ռիսկերը կառավարելու համար:

Ի վերջո, իշխանությունը չի կարող ամեն անգամ ասել՝ «արտաքին գործոն էր» եւ դրանով փակել թեման: Պետության գործառույթներից մեկը հենց այդ արտաքին ռիսկերի ազդեցությունը մեղմելն է:

Ուստի հեղուկ գազի շուրջ այսօր պետք է հնչի ոչ թե հերթական արդարացումը, այլ պարզ պատասխանների շարք:

Ո՞վ է ներմուծում:

Ի՞նչ գնով է ներմուծում:

Որքա՞ն է կազմում ճանապարհային եւ այլ ծախսը:

Ի՞նչ գնով է գազը վաճառվում վերջնական սպառողին:

Որքա՞ն է վաճառողների մարժան:

Եւ ո՞վ է վերահսկում, որ շուկայում սպառողի հաշվին գերշահույթ չձեւավորվի:

Մինչ այդ հարցերը կմնան անպատասխան, 240 դրամանոց հեղուկ գազը պարզապես գին չի լինի: Այն կլինի հերթական ցուցիչը, որ Հայաստանում շուկայում թանկացումների ժամանակ պատասխանատուները շատ են, բայց պատասխանատու չկա:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԱՐՎԱԾ Է ՀԱՍՑՐԵԼ

Ռուսական բանակը հարված է հասցրել Կիեւի Ժուլյանի օդանավակայանին: Այս մասին Telegram-ում հայտարարել է Ուկրաինայի Գերագույն ռադայի պատգամավոր Ալեքսեյ Գոնչարենկոն, գրում է Լուրեր.com-ը: Նրա խոսքով՝ Կիեւի Սոլոմյանսկի շրջանում գտնվող օդանավակայանի ուղղությամբ հարվածն իրականացվել է անօդաչու թռչող սարքի միջոցով: Կիեւի քաղաքապետ Վիտալի Կլիչկոն հայտնել է, որ Սոլոմյանսկի շրջանում հրդեհ է բռնկվել ոչ բնակելի շինություններով կառուցապատված տարածքում: Նրա խոսքով՝ արտակարգ ծառայություններն ուղեւորվել են դեպքի վայր: Կլիչկոն, սակայն, իր հաղորդագրությունում չի նշել, որ հարվածի թիրախը հենց Ժուլյանի օդանավակայանն է: Ավելի վաղ հաղորդվել էր, որ սեպտեմբերի 4-ի առավոտյան ռուսական ուժերը ԱԹՍ-ներով եւ հրթիռներով հարվածներ են հասցրել Կիեւին եւ Օդեսային:

ԱՆԴՐԱԴԱՐՁԵԼ ԵՆ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ

Հայաստանի Հանրապետության ԱԺ նախագահ Ռուբեն Ռուբինյանը սեպտեմբերի 4-ին ընդունել է ՀՀ-ում Կատարի Պետության արտակարգ եւ լիազոր դեսպան Մանսուր Աբդուլլա Սալեմ Սաադ Ալ-Սուլայթինին: «Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ Ազգային ժողովի տարածած հաղորդագրության մեջ նշվում է, որ հանդիպման սկզբում դեսպանը շնորհավորել է Ռուբեն Ռուբինյանին ՀՀ Ազգային ժողովի նախագահի պաշտոնում ընտրվելու կապակցությամբ: Կողմերը գոհունակություն են հայտնել երկկողմ հարաբերությունների առկա բարձր մակարդակի առնչությամբ եւ արդյունավետ համագործակցությունը շարունակելու պատրաստակամություն հայտնել: Ընդգծվել են միջխորհրդարանական համագործակցության շարունակական խորացումն ու փոխայցերի կարեւորությունը: Անդրադարձ է եղել տարածաշրջանային խնդիրներին եւ զարգացումներին: Զրուցակիցները քննարկել են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

ՀԱՅՏԱՐԱՐԵԼ Է

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը կարծում է, որ ԱՄՆ-ն շուտով հաղթանակ կտանի Իրանի նկատմամբ: «Արմենպրես»-ի փոխանցմամբ՝այս մասին ասել է նա GB News հեռուստաալիքի հետ հարցազրույցում: «Մենք կհաղթենք, եւ դա կլինի շուտով, որովհետեւ մենք արդեն հաղթել ենք. չէ՞ որ նրանք չեն կարող միջուկային զենք ունենալ», - նշել է նա: Թրամփը նաեւ նշել է, որ ճիշտ է վարվել Իրանի դեմ պատերազմ սկսելու հարցում, քանի որ նրա պնդմամբ՝ եթե դա տեղի չունենար, Թեհրանն արդեն «երկու, գուցե, չորս շաբաթ անց» կարող էր միջուկային զենք ստանալ, իսկ այժմ այդ ժամկետը երկարաձգվել է մինչեւ 25 տարի: Միեւնույն ժամանակ, Միացյալ Նահանգների ղեկավարը վստահեցրել է, որ ԱՄՆ-ն հաջող գործողություններ է իրականացնում Իրանի դեմ եւ «վերահսկում է Հորմուզի նեղուցը»: ԱՄՆ-ն եւ Իսրայելը պատերազմ են սկսել Իրանի դեմ փետրվարի 28-ին: Հունիսին Վաշինգտոնը եւ Թեհրանը ստորագրել են փոխըմբռնման հուշագիր, որը նախատեսում էր մարտական գործողությունների անհապաղ դադարեցում բոլոր ճակատներում, այդ թվում՝ Լիբանանում: Սակայն հուլիսի 8-ի գիշերը Միացյալ Նահանգները վերսկսել է լայնածավալ հարվածներն Իրանի դեմ՝ մեղադրելով նրան Հորմուզի նեղուցի հետ կապված պայմանները խախտելու համար: Հուլիսի վերջին մարտերը դադարել էին, սակայն օգոստոսի 30-ին՝ կրկին վերսկսվել:

ՍՊԱՌՆԱՑԵԼ Է

Իսրայելի պաշտպանության նախարար Իսրայել Կացը հայտարարել է, որ Իրանի կողմից հնարավոր հարձակման դեպքում Իսրայելը կթիրախավորի Իրանի ամբողջ ենթակառուցվածքը, այդ թվում՝ էներգետիկ օբյեկտները, հայտնում է Լուրեր.com-ը: Կացի խոսքով՝ նման իրավիճակում Իսրայելը «չի սահմանափակվի» եւ պատրաստ է կոշտ պատասխան տալ: Նա նաեւ նշել է, որ իսրայելական բանակը պատրաստ է գործողությունների թե՛ պաշտպանական, թե՛ հարձակողական ուղղություններով:

ՆՍՏԵՑՐԵԼ ԵՆ ԴԵՄ ԱՌ ԴԵՄ

ԻՆՉ Է ԿԱՏԱՐՎԵԼ ԿՈՄԻՏԵՈՒՄ

ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ երեկ ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի վարչության ղեկ Ռաֆայել Վարդանյանին կանչել են կրկին Հակակոռուպցիոն կոմիտե եւ առերեսել կալանավորված ոստիկանի հետ: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ առերեսումը տեւել է մոտ 4 ժամ: Ինչ է սպասվում՝ դեռեւս նախաքննական մարմինը լռում է:

Իսկ ինչ էր եղել:

Բանն այն է, որ երկու ուժային կառույցները՝ ՆԳՆ ոստիկանությունն ու Քննչական կոմիտեն, բախվել են իրար, եւ առայժմ հաղթում է քննչականը:

ArmLur.am-ը հայտնել էր, որ Հակակոռուպցիոն կոմիտեում ակտիվ քննություն է ընթանում Քննչական կոմիտեում ոստիկանին խոշտանգելու դեպքով:

ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ Հակակոռուպցիոն կոմիտե է հրավիրվել եւ հարցաքննվել ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի վարչության վարչության պետ Ռաֆայել Վարդանյանը:

Հիշեցնենք՝ օգոստոսի 22-ին հայտնել էինք, որ ՆԳՆ ոստիկանության Եղվարդի բաժնի օպերլիազոր Սարգիս Աղասի Բագրատունյանը ծեծի էր ենթարկվել, ու տեւական ժամանակ շտապօգնության աշխատակիցներին թույլ չէին տվել մտնել քննչական վարչություն, դեպքի վերաբերյալ ահազանգ էր ստացել նաեւ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը:

Ըստ ոստիկանի հարազատների՝ ծեծի անմիջական մասնակից է եղել ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի վարչության պետ Ռաֆայել Վարդանյանը, եւ հենց նրա մասնակցությամբ են քննիչները ծեծի ենթարկել ոստիկանության աշխատակցին:

Ոստիկանության աշխատակից օպերլիազոր Սարգիս Աղասի Բագրատունյանը այս պահին կալանավորված է:

Իսկ ինչն էր եղել միջադեպի պատճառը: Բանն այն է, որ Մալաթիայի քննչականի մոտ կա ավտոտեխսպասարկման կետ: Կոմիտեի քննիչները մեքենան կայանել են տեխսպասարկման կետի դիմաց, եւ սեփականատերը խնդրել է մեքենաները դուրս հանել, որը վերածվել է թեժ խոսակցության:

Արդյունքում, ՆԳՆ ոստիկանության Եղվարդի բաժնի օպերլիազոր Սարգիս Բագրատունյանը, տեղեկանալով, որ իր հարազատը, որը ավտոտեխսպասարկման կետի սեփականատերն է եւ տհաճ խոսակցության մեջ է հայտնվել, փորձել է խնդիրը կարգավորել, սակայն չէր ստացվել, առավել թեժացել էր վիճակը, ու սկսվել էր ծեծկռտուք:

Ըստ ոստիկանի հարազատների՝ այս դեպքից հետո ՆԳՆ ոստիկանության Եղվարդի բաժնի օպերլիազոր Սարգիս Աղասի Բագրատունյանին կանչում են քննչական, որտեղ ներկա է լինում ՀՀ Քննչական կոմիտեի Երեւան քաղաքի վարչության վարչության պետ Ռաֆայել Վարդանյանը ու ծեծի ենթարկում եւ նրա նկատմամբ քրեական գործ է հարուցում:

Դեպքին անդրադարձել էր Քննչական կոմիտեն՝ հայտնելով, թե իբր քննիչները՝ վարչության պետի մասնակցությամբ, դաժան ծեծի են ենթարկել ոստիկանին, չի համապատասխանում իրականությանը:

Ու մինչ քննչականը հերքում էր, գործի անցավ Հակակոռուպցիոն կոմիտեն. Եղվարդի բաժնի օպերլիազոր Սարգիս Բագրատունյանին ՔԿ ԵՔՎ վարչության պետ Ռաֆայել Վարդանյանի մասնակցությամբ ծեծի ենթարկելու վերաբերյալ հաղորդման հիման վրա քրեական վարույթ նախաձեռնեց:

Պաշտոնապես հայտնեցին, որ պաշտոնատար անձանց կողմից խոշտանգում կատարելու առերեւույթ հանցագործության դեպքի առթիվ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում ՀՀ քրեական օրենսգրքի 450-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով նախաձեռնվել է քրեական վարույթ:

Ստացվում է՝ ոստիկանության ծառայողին ծեծի են ենթարկել Քննչական կոմիտեի աշխատակիցները, սակայն արդյունքում հենց ոստիկանն է հայտնվել անազատության մեջ: Միջադեպի մյուս կողմի քննիչները շարունակում են ազատության մեջ մնալ: Ըստ փաստաբան Վահե Մարտիրոսյանի՝ իր պաշտպանյալը՝ ոստիկանության ծառայող Սարգիս Բագրատունյանը, քննիչների կողմից ծեծի է ենթարկվել աշխատասենյակում: Փաստաբանը պնդում է, որ նրա հագուստը պատռվել է, մարմնի վրա առկա են եղել վնասվածքներ, իսկ շտապօգնությունը կանչել է հենց ինքը:

Մինչդեռ Քննչական կոմիտեն ներկայացնում է հակառակ վարկածը՝ պնդելով, որ ոստիկանը եւ նրա ավելի քան 20 հարազատներ բռնություն են գործադրել քննիչների նկատմամբ եւ խուլիգանական գործողություններ կատարել:

Իսկ ինչու մինչ օրս Երեւան քաղաքի քննչական վարչության պետ Ռաֆայել Վարդանյանը չի պատժվել իր արարքի համար. թերեւս այն պատճառով, որ եղբայրը՝ Ասատուր Վարդանյանը, ՀՀ Տարածքային կառավարման փոխնախարարն է՝ Ասատուր Վարդանյանը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

33 ԿԳ

3 ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏՎԵԼ Է

ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչության մարդկանց թրաֆիքինգի, անչափահասների սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված եւ թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների քննության վարչությունում ավարտվել է իրացնելու նպատակով առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերի առթիվ նախաձեռնված երեք քրեական վարույթի նախաքննությունը:

Նշված երկու քրեական վարույթի շրջանակում ձեռք բերված փաստական տվյալների համաձայն՝ մի դեպքով Գ.Հ.-ն, մյուս դեպքով՝ Ջ.Գ.-ն, «Telegram» եւ «Whatsapp» հեռահաղորդակցման հավելվածներով ստանալով մաքսանենգ ճանապարհով ՀՀ ներմուծված թմրամիջոցների թաքստոցների տեղորոշումները, նշված վայրերից վերցրել են համապատասխանաբար՝ 6.4 կգ եւ 4.3 կգ «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցներ, սակայն իրենց կամքից անկախ հանգամանքներում հանցավոր մտադրությունն ավարտին չեն հասցրել, քանի որ ձերբակալվել են ոստիկանության աշխատակիցների կողմից:

Բացի այդ, Գ.Հ.-ն փորձելով դիմել փախուստի, իր վարած ավտոմեքենայով հարվածել է ոստիկանության ծառայողին՝ նրա առողջությանը պատճառելով միջին ծանրության վնաս:

Երրորդ քրեական վարույթի շրջանակում ձեռք բերված փաստական տվյալների համաձայն՝ Վ.Զ.-ն, Ս.Փ.-ն, Հ.Բ.-ն եւ Ա.Մ.-ն, օժանդակելով ՀՀ պետական սահմանով առանձնապես խոշոր չափերով՝ 4.5 կգ «Մեթամֆետամին» տեսակի ու 17.8 կգ «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցների մաքսանենգությանը, մեկնել են սահմանային հատված, իրացնելու նպատակով ապօրինի ձեռք են բերել նշված թմրամիջոցները եւ ուղեւորվել Երեւան, սակայն ոստիկանության ծառայողների կողմից ձերբակալվել են:

Բացի այդ, նախաքննության ընթացքում պարզվել է նաեւ, որ Ս.Փ.-ն ձեռք է բերել ՌԴ կեղծ վարորդական վկայական, որով ավտոմեքենան շահագործելու ընթացքում բազմաթիվ անգամներ ներկայացրել է ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության աշխատակցներին:

Նշված երեք քրեական վարույթների շրջանակում հանրային քրեական հետապնդում է հարուցվել 7 անձի նկատմամբ:

Նրանցից 5-ը կալանավորվել են, իսկ 2-ի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է տնային կալանքը:

Քրեական վարույթները նշված անձանց վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են հսկող դատախազին:

ՄՏԵԼ ԵՆ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐ

Քրեական ոստիկանության գլխավոր վարչության ծառայողները ստացել էին օպերատիվ տեղեկություն, որ Արմավիրի մարզի Նոր Արմավիր գյուղի բնակիչ 48-ամյա տղամարդն ու Էջմիածնի բնակիչ 38-ամյա ընկերը, օգտվելով հարսանյաց հանդեսի մասնակցելու մեկնած անձանց տնից բացակայելու հանգամանքից, մայրաքաղաքում եւ հարակից տարածքներում կատարում են բնակարանային գողություններ:

Կասկածյալներին հանցափաստով բռնելու նպատակով իրականացվող միջոցառումներն իրականացվեցին Քրեական ոստիկանության Արարատի եւ Արագածոտնի մարզային վարչությունների գործընկերների հետ:

Օգոստոսի 18-ին՝ ժամը 22-ի սահմաններում, Արագածոտնի մարզի Մուղնի գյուղի ցուցանակի մոտ քրեական ոստիկանները նկատեցին «Ֆոլքսվագեն» մակնիշի կայանված մեքենա, որի ղեկին Էջմիածինցի 38-ամյա տղամարդն էր: Մոտ 20 րոպե կանգնելուց հետո նա մեքենան վարեց Աշտարակի ուղղությամբ:

Իրավապահների մի խումբ նրան պահեց հսկողության տակ, իսկ «Ֆոլքսվագենի» կայանման տեղից մոտ 400 մետր հեռավորության վրա, երբ Կարբի գյուղի տներից մեկի բակից դուրս էր եկել Նոր Արմավիր գյուղի բնակիչ 48-ամյա տղամարդը, ժամը 23.25-ին քրեական ոստիկանները նրան ձերբակալեցին ու տեղափոխեցին Քրեական ոստիկանության Արագածոտնի վարչություն:

Նրա խուզարկությամբ հայտնաբերվեց ոսկեգույն թեւնոց:

23.55-ին էլ ձերբակալվեց ու նույն վարչություն տեղափոխվեց 38-ամյա Էջմիածինցին, իսկ նրա վարած մեքենան կնիքվեց վարչության տարածքում:

Պարզվեց, որ Կարբի գյուղի հիշյալ տան բնակիչները հանդիսությունների սրահում հարսանեկան արարողության էին: Տանտերն ավելի ուշ հրավիրվեց ոստիկանություն եւ հայտնեց, որ տան պատուհանները բաց էին, տունը տակնուվրա էր արված եւ պահարանին դրված զարդատուփից բացակայում էր ոսկեգույն թեւնոցը:

Ձերբակալված տղամարդիկ եւ կազմված փաստաթղթերը ներկայացվել են Արագածոտնի մարզային քննչական վարչություն:

Հետագա միջոցառումներով հիմնավորվել է նրանց կատարած նմանատիպ եւս 5 բնակարանային գողություն:

48-ամյա տղամարդու նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում, նա կալանավորված է:

Նախաքննությունը շարունակվում է:

● *Օգոստոսի 24-ից 31-ը մայրաքաղաքումպարեկները հայտնաբերել են հետիոտնի՝ ոչ սահմանված վայրով անցնելու՝ 1170 դեպք:*

ՄԱՐԶ

14 ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔ ՆՈՐՈԳՄԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԻ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ արել. «Օգոստոսի 19-ի դրությամբ Տավուշի մարզում հանրակրթական քանի՞ դպրոցի շենք է կառուցվում, քանի՞սը՝ նորոգվում, դպրոցի քանի՞ շենք կարիք ունի հիմնանորոգման, քանի՞սը՝ նորոգման: Խնդրում եմ ներկայացնել հիմնանորոգման եւ նորոգման կարիք ունեցող հանրակրթական դպրոցների ցանկը»: Մարզպետի աշխատակազմից հայտնել են. «Ս/թ օգոստոսի 19-ի դրությամբ Տավուշի մարզում կառուցվում է 11 դպրոց, 4 դպրոց վերանորոգվում է, իսկ 14 դպրոց ունի վերանորոգման կարիք»: Տավուշում հանրակրթական 14 դպրոցի շենք վերանորոգման կարիք ունի, սակայն դրանք տարիներով չեն նորոգում, պետական բյուջեի մեծ փողերը մսխում են ոչ արդյունավետ աշխատող պաշտոնյաներին ճոխ պարգեւատրելու, զանազան ֆեստիվառներ, վարչաբենդեր, Սեւանա լճի շուրջ Նիկոլ Փաշինյանի ընկերախմբի հեծանվավազք, Ջենիֆեր Լոպեսի երեւանյան համերգ կազմակերպելու եւ այլնի համար:

ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԵՆ ՈՐՊԵՍ ՄԱՐԶՊԵՏԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Նախկին տարիներին բազմիցս գրել եմ, որ Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը մարզի համայնքներում քաղաքացիների ընդունելություն չի կատարում: Դրանից, այդ քննադատություններից հետո մարզպետը 2025 թվականին, ամեն ամիս մարզի համայնքներից մեկում քաղաքացիների ընդունելություն է նշանակել, ընդունելության օրվա մասին նախապես ծանուցելով մարզի բնակիչներին: Սակայն 2026 թվականին նա խախտել է համայնքներում քաղաքացիների ընդունելության իր իսկ սահմանած ժամանակացույցը: Օգոստոսի 19-ին մարզպետ Հ. Ղալումյանին հարցում եմ կատարել. «2026 թվականի հունվար-օգոստոս ամիսներին որպես Տավուշի մարզպետ ո՞ր համայնքներում եք քաղաքացիների ընդունելություն կատարել, ո՞ր օրերին են կայացել այդ ընդունելությունները, յուրաքանչյուրին քանի՞ քաղաքացի է մասնակցել»: Մարզպետի աշխատակազմից պատասխանել են. «Նախորդիվ Ձեզ արդեն պատասխանել ենք, որ Մարզպետն աշխատանքային այցով լինելով մարզի տարբեր բնակավայրերում, զուգահեռաբար նաեւ քաղաքացիների ընդունելություն է կատարում, լսում է նրանց կողմից բարձրացրած հարցերը եւ տալիս համապատասխան հանձնարարականներ»:

Մարզպետը, նրա աշխատակազմը դիմել են մանիպուլյացիաների՝ քաղաքացիների ընդունելության փոխարեն ներկայացնելով մարզի համայնքներում քաղաքացիների հետ պատահական հանդիպումները:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՔՊ-Ի ՆՈՐ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆԸ

ՄԱՐՏՈՒՆՈՒ ԸՆՏՐԱԿԱՆ ԹԵԺ ԱՃՈՒՆԸ

ArmLur.am-ն արդեն տեղեկացրել է, որ հոկտեմբերի 25-ին Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքապետի ընտրություններ են: Սակայն ընտրության գլխավոր հարցը միայն այն չէ, թե ով է լինելու հաջորդ համայնքապետը: Մարտունու դեպքում ընտրությունը նաեւ գործող իշխանության համար դատասխան է այն հարցին, թե որքանով է համայնքի ղեկավարման գործող մոդելը դահոդանել իր ազդեցությունը:

Այս պահին Մարտունի համայնքի ղեկավարն է Հովհաննես Հովեյանը: Նա պաշտոնը ստանձնել է 2021 թվականի դեկտեմբերի 23-ին՝ 2021 թվականի ՏԻՄ ընտրություններից հետո: Մինչ այդ Հովեյանը շուրջ 16 տարի՝ 2005-2021 թվականներին, ղեկավարել է Վարդենիկ համայնքը: Նրա կենսագրության համաձայն՝ ծնվել է 1966 թվականի օգոստոսի 22-ին Վարդենիկում, կրթություն ստացել Տյումենում, մասնագիտությամբ մենեջմենտ-ֆինանսիստ է:

Հովեյանը՝նախկին ՀՀԿ-ական, այսօր՝ՔՊ-ի թիմում

Հովեյանի քաղաքական անցյալի ամենաուշագրավ հանգամանքներից մեկը նրա կուսակցական ճանապարհն է:

2021 թվականի ընտրություններին նա արդեն առաջադրվել էր «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ցուցակով եւ ցուցակի առաջին համարն էր: Այդ ժամանակ «Հայկական ժամանակին» տված հարցազրույցում Հովեյանը բացահայտ ասում էր, որ ընտրություններին իր մասնակցությունը նաեւ պայմանավորված է նրանով, որ «կուսակցությունն էլ որոշեց», որ ինքը պետք է մասնակցի: Նա խոսում էր համայնքների համաչափ զարգացման, գյուղատնտեսության, սոցիալական խնդիրների, առողջապահության, կրթության, մշակույթի եւ զբոսաշրջության զարգացման մասին:

Այսինքն՝ Հովեյանի ներկայիս քաղաքական դիրքը որեւէ գաղտնիք չէ. նա իշխանական թիմի թեկնածու է եղել եւ համայնքապետ է ընտրվել ՔՊ-ի ցուցակով: 2021 թվականի ընտրություններից հետո նա դարձել է Մարտունու խոշորացված համայնքի ղեկավար:

Սակայն նրա անցյալի վերաբերյալ մամուլում եղել են նաեւ հրապարակումներ, որտեղ Հովեյանը ներկայացվել է որպես նախկին ՀՀԿ-ական եւ Սերժ Սարգսյանի իշխանության տարիներին համայնքային իշխանության ներկայացուցիչ: Մասնավորապես, Հովեյանը նախկինում աջակցել է ՀՀԿ-ին, իսկ 2021-ին արդեն հայտնվել է ՔՊ-ի ցուցակում:

Այս հանգամանքը, բնականաբար, քաղաքական հարց է առաջացնում. ի՞նչ փոխվեց Հովեյանի քաղաքական հայացքներում՝ իշխանափոխությունից հետո, եւ ինչո՞ւ մարդը, որը տարիներ շարունակ աշխատել էր նախկին իշխանության համակարգում, դարձավ նոր իշխանության վստահելի տեղական կադրերից մեկը:

Ամենամեծ աղմուկը՝ համայնքի պայմանագրերն ու ՔՊ-ական ավագանին

Հովեյանի ղեկավարած Մարտունու համայնքապետարանի շուրջ ամենաուշագրավ վերջին հրապարակումներից մեկը վերաբերում է համայնքային գնումներին:

Infoձoշ-ի 2025 թվականի հետաքննության համաձայն՝ 2022-2025 թվականներին Մարտունու համայնքապետարանը շուրջ 741 մլն դրամի 8 պայմանագիր է կնքել «Կոթաշին» ընկերության հետ:

Խնդրի առանցքում այն փաստն է, որ ընկերության սեփականատերն ու տնօրենը մինչեւ 2025 թվականը եղել է Մարտունու ավագանու անդամ Պապ Դանիելյանը, որը համայնքի ավագանի էր ընտրվել հենց ՔՊ-ի ցուցակով: 2025 թվականի ապրիլից ընկերության սեփականատեր ու տնօրեն է դարձել նրա կինը՝ Լիանա Սերոբյանը:

Ըստ նույն հետաքննության՝ միայն 2024 թվականին «Կոթաշինի» եւ համայնքապետարանի միջեւ կնքվել է մոտ 398 մլն դրամի 4 պայմանագիր, իսկ 2025 թվականի մայիսին կնքվել է եւս 216 մլն դրամի պայմանագիր: Ընկերությունը տարբեր բնակավայրերում իրականացրել է ջրագծերի, խաղահրապարակների, ոռոգման համակարգերի, կանգառատեղիների եւ այլ աշխատանքներ:

Այստեղ ամենակարեւոր քաղաքական հարցն այն է, որ հրապարակման հեղինակները մատնանշել են հնարավոր շահերի բախման խնդիրը, մինչդեռ համայնքի ղեկավարը, ըստ հետաքննության, այդտեղ շահերի բախում չի տեսել:

Այս պատմությունը Մարտունու առաջիկա ընտրությունների համատեքստում կարող է դառնալ ամենախոցելի թեմաներից մեկը:

Որովհետեւ հարցը միայն 741 միլիոն դրամը չէ: Հարցն այն է՝արդյո՞ք համայնքի ղեկավարի քաղաքական թիմի անդամների հետ փոխկապակցված բիզնեսները պետք է շարունակեն համայնքային խոշոր պատվերներ ստանալ, եւ որտե՞ղ է այդ գործընթացում ավարտվում քաղաքական թիմի շահը ու սկսվում համայնքի բնակչի շահը:

Իսկ ի՞նչ էր խոստանում Հովեյանը

2021-ի ընտրարշավի ժամանակ Հովեյանը խոստանում էր լուծել Մարտունու եւ հարակից բնակավայրերի ենթակառուցվածքային խնդիրները:

Նա խոսում էր ճանապարհների, խմելու եւ ոռոգման ջրագծերի, փողոցային լուսավորության, մանկապարտեզների, սպորտային դպրոցների եւ աղբահանության խնդիրների մասին: Խոստանում էր նաեւ աջակցել գյուղմթերքի վերամշակմանը, նոր արտադրությունների ստեղծմանը, սառնարանների ու ֆերմերային տնտեսությունների զարգացմանը:

Այսօր արդեն կարելի է ոչ թե խոստումներ, այլ արդյունքներ քննարկել:

Համայնքապետարանի ներկայացրած տվյալների համաձայն՝ 2025 թվականից 2026 թվական է տեղափոխվել 27 սուբվենցիոն ենթածրագիր՝ շուրջ 3 մլրդ 295 մլն դրամ ընդհանուր արժեքով: Դրանց թվում են փողոցների ասֆալտապատում, ոռոգման ցանցերի կառուցում, լուսավորության համակարգերի անցկացում, մանկապարտեզների եւ մշակույթի տների հիմնանորոգում: Համայնքապետարանից հայտնել էին, որ այդ ծրագրերից մոտ 1.2 մլրդ դրամի շինարարություն արդեն իրականացվել էր:

Բայց ընտրությունների նախաշեմին հենց այստեղ է առաջանում ամենակարեւոր հարցը՝արդյո՞ք կատարված շինարարական աշխատանքները բավարար են Մարտունու բնակիչների համար, եւ արդյո՞ք համայնքի ծախսերի ու պայմանագրերի շուրջ առաջացած հարցերին իշխանությունը պատրաստ է տալ լիարժեք պատասխաններ:

Եւ հիմա՝երկրորդ անգամ ՔՊ-ի առաջադրած Հովեյա՞նը

Հոկտեմբերի 25-ի ընտրությունների ամբողջական քաղաքական պատկերը դեռ վերջնական չէ. ԿԸՀ-ի ժամանակացույցով կուսակցությունների եւ դաշինքների ցուցակների գրանցումը տեղի է ունենալու սեպտեմբերի 20-25-ը:

Բայց մեկ բան արդեն ակնհայտ է. Մարտունին լինելու է ՔՊ-ի համար կարեւոր փորձություն:

Ուստի հոկտեմբերի 25-ի ընտրությունը Հովեյանի համար պարզապես հերթական ընտրություն չէ:

Այն կարող է վերածվել քաղաքական հաշվետվության:

Մյուս կողմում՝ իշխանության նկատմամբ ավանդական հարցերը՝ համայնքային միջոցների տնօրինման թափանցիկությունը, ՔՊ-ի ավագանու անդամի հետ փոխկապակցված ընկերությանը հարյուրավոր միլիոնների պայմանագրերը, Հովեյանի նախկին ՀՀԿ-ական անցյալը եւ այն հարցը, թե որքանով է համայնքի կառավարումը դարձել իրականում մրցակցային ու հաշվետու:

Մարտունու ընտրությունների գլխավոր ինտրիգը, հետեւաբար, կարող է լինել ոչ միայն այն, թե ով կհաղթի հոկտեմբերի 25-ին, այլեւ՝ արդյոք Հովեյանի շուրջ ձեւավորված քաղաքական ու կառավարչական համակարգը կստանա՞ բնակիչների նոր վստահությունը:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԿԵՂԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՎ

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչությունում քրեական վարույթի նախաքննության ընթացքում առերեւույթ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ մսամթերքի առուվաճառքով զբաղվող Ջ.Մ.-ն, Վ.Խ.-ն եւ Ս.Յ.-ն 2022 թվականի ընթացքում ապօրինի ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող Վ.Բ.-ից ձեռք են բերել կեղծ անասնաբուժական վկայականներ, համաձայն որի՝ իբր խոշոր եղջերավոր անասունները սպանդանոցում ենթարկվել են անասնաբուժասանիտարական փորձաքննության եւ նույն սպանդանոցից ենթարկվել մթերման, որից հետո կեղծ վկայականներն օգտագործել են վերոհիշյալ մսամթերքը վաճառելիս:

Ս.Յ.-ի, Վ.Խ.-ի եւ Ջ.Մ.-ի նկատմամբ հսկող դատախազի որոշմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 457-րդ հոդվածի 1-ին մասով (կեղծ փաստաթղթեր իրացնելը, պատրաստելը կամ օգտագործելը):

Հետագայում Վ.Բ.-ի վերաբերյալ հանրային քրեական հետապնդում չհարուցելու մասին որոշում է կայացվել՝ նրա մահվան հիմքով: Վերջինիս նկատմամբ հանրային քրեական հետապնդում էր հարուցվել՝կեղծ փաստաթղթեր իրացնելու, պատրաստելու, օգտագործելու (10 դրվագ) եւ ապօրինի ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու (8 դրվագ) համար:

Քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է հսկող դատախազին:

● *Մարզերում օգոստոսի 24-ից 31-ը պարեկները հայտնաբերել են հետիոտնի՝ոչ սահմանված վայրով անցնելու՝285 դեպք:*

ԼՈՒՐԵՐ

ՏԵԽՆԻԿԱՊԵՍ ՎԵՐԱԶԻՆՎԵԼ Է

Ստեփան Գիշյան բարեգործական հիմնադրամի աջակցությամբ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը համալրվել է 120 ռադիո եւ 45 նոր աուդիոգիդերով: Աուդիոգիդերը հինգ լեզվով են՝ անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն, գերմաներեն եւ չինարեն: Շուտով կավելանան նաեւ իսպաներենն ու իտալերենը: «Այս ներդրումը շատ կարեւոր է Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի համար, քանի որ այն բարձրացնում է թանգարանի աշխատանքների արդյունավետությունը: Օրինակ, ռադիոգիդերի միջոցով սրահում միաժամանակ կարող են մի քանի էքսկուրսավարներ աշխատել եւ առանց աղմուկի, առանց միմյանց խանգարելու մեծ խմբերի սպասարկել, իսկ աուդիոուղեցույցն օգնում է դառնալ ինքդ քո էքսկուրսավարը՝ որոշելով շրջայցի տեմպը»,- նշել է «Ստեփան Գիշյան» բարեգործական հիմնադրամի տնօրեն Աննա Գիշյանը:

««Ստեփան Գիշյան» հիմնադրամն այն հաստատություններից է, որը մշտապես օգնում է Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտին: Առաջին համատեղ ծրագիրը մենք իրականացրեցինք 2020թ.-ին, երբ «Ստեփան Գիշյան» հիմնադրամի աջակցությամբ ձեռք բերեցինք պրոյեկտորներ, որոնք մինչեւ այսօր գործածվում են թանգարանում: Սա մեր երկրորդ հաջող համագործակցությունն է, որի շնորհիվ մենք ունեցանք 120 ռադիոգիդ եւ 45 աուդիոգիդ»,- նշում է Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Հրաչյա Թաշչյանը:

«Ստեփան Գիշյան» բարեգործական հիմնադրամը ստեղծվել է Ակբա բանկի, ֆրանսիական Կրեդիտ Ագրիկոլ, Կրեդիտ Ագրիկոլ Ազգային Ֆեդերացիայի եւ Ստեփան Գիշյանի ընտանիքի կողմից: -Հիմնադրամի ծրագրերն ուղղված են հայ-ֆրանսիական կապերի ամրապնդմանը, Հայաստանի սոցիալ-տնտեսական, գիտակրթական, մշակութային, առողջապահական համակարգերի բարելավմանն ու կատարելագործմանը: *(Գ)*

ԲՈՒԼԳԱԿՈՎԻՑ ՄԵՔԲԵՐՈՒՄ

Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության մամուլի խոսնակ Մարիա Զախարովան մեջբերել է դասականներից մեկին՝ պատասխանելով 102-րդ ռազմաբազայի մասին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի խոսքերին:

«Երեւանը 102-րդ ռուսական ռազմաբազայի առկայությունը կենսականորեն կարեւոր չի համարում, բայց դեռեւս չի բարձրացրել դրա դուրսբերման հարցը: ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարել է, որ իշխանությունները չեն առարկի, եթե Ռուսաստանը որոշի դուրս բերել բազան: Երեւանը նաեւ պատրաստ է քննարկել իր ներկայության շարունակականությունը, եթե Մոսկվան ցանկանա պահպանել ռազմական օբյեկտը: Փաշինյանի խոսքով, հայկական կողմը երբեք պաշտոնապես չի բարձրացրել բազայի դուրսբերման հարցը:

«Դու տղամարդ ես, թե՞ կին» (Բուլգակով, «Շան սիրտ»)»,- գրել է նա:

ԽՆԴԻՐՆԵՐ

ՓԱՇԻՆՅԱՆԸ ԴԻԼԻՋԱՆՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎԻ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը Դիլիջանում մասնակցել է «Ջրային ոլորտի բարեփոխումներ 2026-2031» խորագրով աշխատաժողովին:

Միջոցառմանը մասնակցել են Կառավարության անդամներ, պատգամավորներ, շահագրգիռ գերատեսչությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր հատվածի ներկայացուցիչներ, ջրային ոլորտի փորձագետներ:

Վարչապետը հանդես է եկել բացման խոսքով եւ ներկայացրել ջրային ոլորտի վերաբերյալ մի շարք արձանագրումներ. «Այսօր Հայաստանի Հանրապետությունում չկա գեթ մեկ բնակավայր, որը խմելու ջրի հետ կապված էական եւ շոշափելի խնդիրներ չունի: Ես խոսում եմ բնակավայրերի տարածքի մասին: Այսօր Հայաստանում վարելահողերի, այգիների, տնկարկների միայն փոքր մասն է, որ հասանելիություն ունի ոռոգմանը: Այսինքն, ըստ էության, մեր վարելահողերի մեծ մասն ընդհանրապես ոռոգմանը հասանելիություն չունի»:

Վարչապետն անդրադարձել է նաեւ հանրապետությունում առկա հազարավոր հեկտարներով ամայի հողատարածքներին, որոնք նույնպես հասանելիություն չունեն ջրին:

«Հաջորդ գլոբալ պրոբլեմը, որի հետ մենք առնչվում ենք, այն է, որ այսօր օգտագործված ջրի մաքրումը ոչ թե կանոն է, այլ կանոնից հիմնականում բացառություն: Եվ ակնհայտ է նաեւ, որ ջրի օգտագործման այսպիսի որակը որեւէ կերպ չի կարող ընդունելի լինել, որովհետեւ այն իր հետ ակնհայտորեն բերում է հետեւանքներ: Մենք նույնիսկ շատ հետեւանքների հետագծելիությունն ի վիճակի չենք տեսնել եւ տեղորոշել, բայց ակնհայտ է, որ այս պրոբլեմն ունենք: Հաջորդ արձանագրումը, որ մենք պետք է անենք՝ մեր երկրում ձեւավորվում է ավելի քան անհրաժեշտ ջրային ռեսուրս, որպեսզի մենք կարողանանք զուտ տեսականորեն իմ նշած խնդիրները լուծել»,- ասել է Նիկոլ Փաշինյանը:

Վարչապետն ընդգծել է աշխատաժողովի աշխատանքի կարեւորությունը ոլորտում արձանագրված առկա խնդիրների լուծման ճանապարհային քարտեզ մշակելու համատեքստում. «Եվ մեր այսօրվա քննարկման առանցքային խնդիրներից մեկը հետեւյալն է, թե ինչպես, ինչ ճանապարհային քարտեզով կարող ենք այսօրվա արձանագրված կետից հասնել այն տեղը, երբ ջուրը հասանելի կլինի Հայաստանի Հանրապետության այն բոլոր հատվածներում, որտեղ նրա հասանելիությունը անհրաժեշտ է: Խոսքը բնակավայրերի մասին է, խմելու ջրի հասանելիության լիարժեք եւ շուրջօրյա ռեժիմն ապահովելու մասին է: Երկրորդը՝ոռոգման ջրի հասանելիությունը բոլոր բնակավայրերում: Սա նույնպես քաղաքային եւ գյուղական բնակավայրերի կյանքի կազմակերպման շատ էական հատված է: Եվ երրորդը՝ջրի հասանելիությունը բոլոր այն տեղերում, որտեղ այն կարող է բերել տնտեսական զարգացում, այսինքն՝ձեւավորել ավելացված արժեք»:

Եւ այս ամենից, ըստ Նիկոլ Փաշինյանի, բխում են գլոբալ մարտահրավերներ, որոնք արձանագրված են Կառավարության ծրագրում կամ Հայաստանի տնտեսական եւ ինստիտուցիոնալ վերափոխման դոկտրինում: «Մենք պետք է հասկանանք, որ պետք է ձգտենք եւ հասնենք մի կետի, որ առանց մաքրման որեւէ քանակությամբ օգտագործված ջուր բաց չթողնվի բնություն»,- շեշտել է վարչապետը՝ հավելելով, որ այն կնպաստի բնապահպանական եւ առողջապահական բազմաթիվ խնդիրների լուծմանը:

Աշխատաժողովի ընթացքում երկրի ղեկավարն ակնկալել է նաեւ ՀՀ-ում ձեւավորվող ջրային պաշարների կուտակման առավել արդյունավետ մեխանիզմ գտնելու հարցի քննարկում:

«Ըստ էության սա է այն շրջանակը, որը մենք այսօր պիտի քննարկենք, բայց այս մասին քննարկումներն այսօր չէ, որ սկսել ենք: Մենք կարեւոր համարեցինք, որ մի մեկնարկային կետ ֆիքսենք, որտեղ այս օրակարգը ձեւակերպենք՝ նաեւ օրենսդիր, գործադիր իշխանության, փորձագիտական հանրության, մասնավոր հատվածի եւ համայնքների ներկայացուցիչների մասնակցությամբ: Այս ընթացքում կիսվենք մեր կուտակած փորձով, գիտելիքներով, տպավորություններով, գուցե հասանելիություն ստանանք այնպիսի իմացության, որին այս պահին հասանելիություն չունենք: Բայց շատ կարեւոր է արձանագրել, որ այսօրվա քննարկումը պետք է ունենա շատ կարեւոր մի գործնական արդյունք՝ մենք պետք է առաջիկա մեր անելիքների ջրային ոլորտի բարեփոխումների ճանապարհային քարտեզ ձեւավորենք: Բայց այդ ճանապարհային քարտեզը, որպեսզի լինի գործնական, պիտի լինի մաքսիմալ ազնիվ եւ իրագործելի: Ինչ նկատի ունեմ ազնիվ ասելով՝ մենք, ի վերջո, պետք է առերեսվենք այն փաստին, որ իմ նշած խնդիրների մի հսկայական հատվածը կապված է ջրի նկատմամբ մեր ընդհանուր քամահրական վերաբերմունքի հետ»,- ասել է Նիկոլ Փաշինյանը՝ հավելելով, որ պետք է ունենալ համապատասխան վերաբերմունք, այդ թվում՝ տնտեսական, սոցիալ-հոգեբանական, անհատական, կենցաղային եւ բոլոր մակարդակներում:

Երկրի ղեկավարի խոսքով՝ այսօր ՀՀ-ում ջրի սակագներն արտահայտում են մեր վերաբերմունքը ջրի նկատմամբ. «Այնուամենայնիվ, մենք պետք է արձանագրենք, որ իմ նշած շղթան չենք ամբողջացնի, եթե այս ամեն ինչի հիմքում չլինի համակարգի ծախս-արդյունավետության բանաձեւի որոշումը, առանց դրա պարզապես հնարավոր չէ: Նախ՝ պետք է օբյեկտիվ սակագին որոշել եւ անդրադառնալ՝ այդ սակագնի որ մասը ով/ինչպես պետք է վճարի: Ես ուզում եմ, որ մենք հստակ նաեւ սա տարբերակենք: Այսինքն՝ սակագինը մի խնդիր է, սակագնի վճարման բանաձեւերը՝ երկրորդ»:

Վարչապետն անդրադարձել է նաեւ ջրի շուկան ազատականացնելու հարցին. «Մենք պետք է նաեւ ՀՀ-ում կարողանանք, ի վիճակի լինենք ջրի շուկա ձեւավորել: Եվ սա է այն բարեփոխումը, որը նաեւ ջրային ոլորտում մասնավոր ներդրումների խթան կհանդիսանա, եթե լինի հնարավորություն եւ համակարգ, որոշակի քաղաքական ուղերձ, որ կարող են ներդրումներ լինել ջրի ոլորտում, եւ ոռոգման ջուրը, մասնավորապես, կարող է շուկայական հարաբերությունների առարկա լինել: Սա նույնպես կարող է էականորեն փոխել եւ՛ իրադրությունը, եւ՛ ընկալումը, եւ՛ վերաբերմունքը»:

Ամփոփելով՝Նիկոլ Փաշինյանն ընդգծել է այն պայմանավորվածությունը, որի համաձայն՝ այսօրվա քննարկման ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը կվերածեւակերպվի որպես անելիքների ճանապարհային քարտեզ: «Իհարկե, այդ ճանապարհային քարտեզի նախագիծը կձեւավորվի, եւս մեկ անգամ պատշաճ ձեւաչափերով դրանց անդրադարձ կլինի, որից հետո կընդունվի համապատասխան պետական ծրագիր, որը կսկսենք իրագործել մեր մասնավոր հատվածի գործընկերների հետ միասին»,- ասել է վարչապետը եւ ներկաներին մաղթել արդյունավետ քննարկում:

Աշխատաժողովի ընթացքում թեմատիկ քննարկումներ են անցկացվել ջրային ռեսուրսների կառավարման, ենթակառուցվածքների եւ տեխնոլոգիաների վերաբերող: Անդրադարձ է կատարվել ոլորտի խնդիրներին, դրանց լուծման հնարավորություններին եւ քայլերին, ներկայացվել են առաջարկություններ եւ տարբեր դիտարկումներ:

Աշխատաժողովի ավարտին Նիկոլ Փաշինյանը շնորհակալություն է հայտնել ներկաներին հետաքրքիր քննարկում իրականացնելու համար:

Վարչապետը նշել է, որ քննարկման արդյունքում թեման ընդլայնվել է եւ իր կարծիքով՝ խնդիրը պետք է վերաձեւակերպել եւ ջրային ոլորտի բարեփոխումներից պետք է անցում կատարել ջրային վերափոխման օրակարգին: «Ինչու եմ խոսում հատկապես վերափոխման, ոչ թե բարեփոխման մասին, որովհետեւ առանց կրթական եւ սոցիալ-հոգեբանական ոլորտի փոփոխությունների, ո՛չ էներգետիկայում, ո՛չ ջրային ոլորտում, ո՛չ հանրային կյանքում, ո՛չ պետականաշինության մեջ, ո՛չ պետական կառավարման, ո՛չ կենցաղավարության մեջ փոփոխություն չենք ունենա: Ընդհանրապես, կարծում եմ՝ բոլոր ոլորտներում «բարեփոխում» բառը պետք է փոխարինենք «վերափոխում» բառով, որովհետեւ չկա այնպիսի խնդիր, որի 10% մակերեսային փոփոխությամբ կարողանանք փոփոխությունների հասնել: Բոլոր ոլորտներում արդեն այն վիճակում ենք, որ խոսքը խորքային փոփոխությունների մասին պետք է գնա, այդ թվում՝ այն պատճառով, որ նոր տեխնոլոգիաների առկայության պայմաններում ինչ էլ բարեփոխենք, արդեն հետ մնացած ենք լինելու»,-նշել է երկրի ղեկավարը:

Նիկոլ Փաշինյանի դիտարկմամբ՝ ճիշտ է, խնդիրն այդպես բարդանում է, բայց պետք է բարդ խնդիր դնել, որ արդյունքում լուծում լինի, որովհետեւ եթե խնդիրը պատշաճ բարդությամբ չի ձեւակերպում, կոսմետիկ լուծում է ստանում. «Երկարաժամկետ՝ տասնամյակների մասին է խոսքը, եւ մենք պետք է տասնամյակների մեջ մեր հնգամյա անելիքը ճիշտ պլանավորենք եւ իրականացնենք, որովհետեւ, եթե հիմքը ճիշտ է դրվում եւ վեկտորը ճիշտ է որոշվում, նաեւ վերափոխման թափանիվը սկսում է աշխատել»:

Երկրի ղեկավարը նշել է, որ հանրությունը վերափոխման գործընթացում պետք է դառնա խոսակցության լիարժեք մասնակից: Ըստ վարչապետի՝ մարդկանց պետք է մանրամասն ներկայացնել ոլորտում առկա խնդիրները, որպեսզի վերջիններս ճիշտ հասկանան դրանք եւ դրանց լուծմանն ուղղված քայլերը. «Անընդհատ մեր մտքերը պետք է կիսենք մարդկանց հետ, ինչպես այսօր բանախոսները կիսեցին մեզ հետ»:

Վարչապետը վերափոխման գործընթացում կարեւորել է նաեւ նման աշխատաժողովների շարունակական անցկացումը եւ հաջողություն մաղթել բոլորին ջրային օրակարգերն իրականացնելու ճանապարհին:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԱՍՏՂԱՅԻՆ ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐԸ

ՈՎՔԵ՞Ր ԵՆ ԱՄԵՆԱՀԱՅՏՆԻ ԱԶԱՏ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

Եվրոպական բարձրակարգ առաջնություններում ամառային տրանսֆերային պատուհանը պաշտոնապես փակվել է, սակայն որոշ առաջնություններում պայմանագրեր կնքել դեռ հնարավոր է:

Բացի այդ, ակումբները կարող են ցանկացած պահի անվճար ձեռք բերել ազատ գործակալի կարգավիճակ ունեցող խաղացողների: Բրիտանական BBC պարբերականը կազմել է ներկայումս առանց թիմի մնացած ամենաաստղային ֆուտբոլիստների ցանկը:

Պոլ Պոգբա, 33 տարեկան (նախորդ ակումբը՝ «Մոնակո»)

«Մանչեսթեր Յունայթեդի» նախկին կիսապաշտպանը 2025-ի մարտին դոպինգի պատճառով 18-ամսյա որակազրկման ավարտից հետո շատ քիչ է խաղացել: Նախորդ ամառ միանալով «Մոնակոյին»՝ նա անցկացրել է ընդամենը 6 հանդիպում: Վնասվածքների շարքի պատճառով ֆրանսիական ակումբը նախորդ ամիս խզեց նրա պայմանագիրը՝ ժամկետի ավարտից մեկ տարի առաջ:

Կարիմ Բենզեմա, 38 տարեկան (նախորդ ակումբը՝ «Ալ-Հիլալ»)

2023-ին «Ռեալից» հեռանալուց հետո Բենզեման երեք տարի անցկացրեց «Ալ-Իթիհադում», ապա տեղափոխվեց «Ալ-Հիլալ»: Սակայն ընդամենը վեց ամիս անց «Ոսկե գնդակի» դափնեկրի պայմանագիրը խզվեց: Պատճառը թերեւս Կրիսենսիո Սամերվիլ-Օլի Ուոթկինս-Գաբրիել Մարտինելի հարձակվողական եռյակի ժամանումն էր, եւ, չնայած այս մրցաշրջանում նրա անցկացրած 3 հանդիպումներին, օգոստոսի 31-ին ֆրանսիացին հեռացավ ակումբից:

Ռիյադ Մահրեզ, 35 տարեկան (նախորդ ակումբը՝ «Ալ-Ահլի»)

Պրեմիեր լիգայի հնգակի չեմպիոնի պայմանագիրը նույնպես վաղաժամ խզվել է: 2023-ին «Մանչեսթեր Սիթիից» տեղափոխվելուց հետո Մարեզը 122 խաղում դարձել էր 37 գոլի հեղինակ: Սպասվում է, որ նա կմնա Սաուդյան Արաբիայում եւ կմիանա «Ալ-Շաբաբին»:

Ռահիմ Ստերլինգ, 31 տարեկան (նախորդ ակումբը՝ «Ֆեյենորդ»)

Ստերլինգը հեռացավ «Ֆեյենորդից» ընդամենը երեք ամիս եւ ութ խաղ անց: Հաջորդ ամիս նա կկանգնի դատարանի առաջ՝ մայիսին վտանգավոր վարման եւ արգելապատնեշին բախվելու մեղադրանքով: Ըստ աղբյուրների՝ անգլիացի վինգերը «չափազանց բարդ տարիներ» է ապրում:

Ֆիլիպե Կոուտինյո, 34 տարեկան (նախորդ ակումբը՝ «Վասկո դա Գամա»)

Բրազիլացին փետրվարին հեռացավ հարազատ ակումբից՝ նշելով, որ «հոգեպես հոգնած է»: Նա պաշտոնապես չի ավարտել կարիերան, իսկ նախկինում լուրեր էին շրջանառվում MLS հնարավոր տեղափոխության մասին:

Ջեյդոն Սանչո, 26 տարեկան (նախորդ ակումբը՝ «Մանչեսթեր Յունայթեդ»)

2021-ին 73 մլն ֆունտով ՄՅՈՒ տեղափոխվելուց հետո Սանչոյի կարիերան անկում ապրեց: Վերջին 2,5 տարիներին նա վարձավճարով խաղացել է «Չելսիում» եւ «Ասթոն Վիլայում»: Պրեմիեր լիգայում ընդամենը 30 խաղ անցկացրած վինգերը, ըստ լուրերի, համաձայնության է եկել բրազիլական «Պալմեյրասի» հետ:

Դանիել Կարվախալ, 34 տարեկան (նախորդ ակումբը՝ «Ռեալ Մադրիդ»)

Իր սերնդի լավագույն աջ պաշտպաններից մեկը հունիսին «Ռեալի» հետ պայմանագրի ավարտից հետո մնացել է առանց ակումբի: 13 տարվա ընթացքում նա Մադրիդում անցկացրել է 451 հանդիպում: Ամռանը Կարվախալը մարզվել է Իսպանիայի ֆուտբոլի ֆեդերացիայի բազայում՝ հայրենակից Խոսելուի հետ:

Ջեյմի Վարդի, 39 տարեկան (նախորդ ակումբը՝ «Կրեմոնեզե»)

«Լեսթերում» 13 տարի անցկացնելուց հետո Վարդին նախորդ մրցաշրջանն անցկացրեց իտալական «Կրեմոնեզեում», սակայն թիմի՝ Սերիա Բ տեղափոխվելուց հետո հեռացավ: Նրա ծառայություններով հետաքրքրված են անգլիական «Ռեքսեմը», «Շեֆիլդ Ուենսդեյն» ու «Վեսթ Հեմը»:

Դավիդ Ալաբա, 34 տարեկան (նախորդ ակումբը՝ «Ռեալ Մադրիդ»)

Ալաբան մադրիդյան ակումբից հեռացավ մայիսին՝ 5 տարի այնտեղ անցկացնելուց հետո: Նրա տպավորիչ կարիերան ներառում է 12 չեմպիոնական տիտղոս եւ Չեմպիոնների լիգայի 4 գավաթ: Չնայած ՄՅՈՒ-ի եւ այլ ակումբների կողմից հետաքրքրությանը, ավստրիացին դեռ նոր թիմ չի գտել:

Սերխիո Ռամոս, 40 տարեկան (նախորդ ակումբը՝ «Մոնտերեյ»)

Իսպանացի լեգենդար պաշտպանն առանց ակումբի է 2025-ի դեկտեմբերից՝ մեքսիկական «Մոնտերեյից» հեռանալուց ի վեր: Նա չի ավարտել կարիերան եւ իրեն բավականաչափ լավ մարզավիճակում է զգում: Այս տարվա սկզբին Ռամոսը փորձել է գնել իր նախկին ակումբի՝ «Սեւիլյայի» բաժնետոմսերի վերահսկիչ փաթեթը, սակայն գործարքը ձախողվել է:

Այլ հայտնի ազատ գործակալներ

Ալեքսանդր Զինչենկո (29 տ., նախորդ ակումբը՝ «Այաքս»)

Խամես Ռոդրիգես (35 տ., նախորդ ակումբը՝ «Մինեսոտա Յունայթեդ»)

Անտոնի Մարսիալ (30 տ., նախորդ ակումբը՝ «Մոնտերեյ»)

Դելե Ալի (30 տ., նախորդ ակումբը՝ «Կոմո»)

Խոսելու (36 տ., նախորդ ակումբը՝ «Ալ-Գարաֆա»)

Ուիլֆրիդ Զահա (33 տ., նախորդ ակումբը՝ «Գալաթասարայ»)

Իվ Բիսումա (30 տ., նախորդ ակումբը՝ «Տոտենհեմ»)

Ժորժինյո Վեյնալդում (35 տ., նախորդ ակումբը՝ «Ալ-Իթիֆաք»)

Քոնոր Քոուդի (33 տ., նախորդ ակումբը՝ «Ռեքսեմ»)

Տայրել Մալասիա (27 տ., նախորդ ակումբը՝ «Մանչեսթեր Յունայթեդ»)

Ջորդան Այու (34 տ., նախորդ ակումբը՝ «Լեսթեր»)

Սոլի Մարչ (32 տ., նախորդ ակումբը՝ «Բրայթոն»)

ՄԱՐԶԱԿԱՆ

ԻՆՉՊԵՍ Է ՄԵՍՍԻՆ ՕԳՆԵԼ ԼՐԱԳՐՈՂԻՆ

Արգենտինացի հայտնի լրագրող Վերոնիկա Բրունատին հուզիչ հոդված է հրապարակել՝ շնորհակալություն հայտնելով Լիոնել Մեսսիին Արգենտինայի հավաքականից հեռանալուց հետո, գրում է armsport-ը:

Նա վերհիշել է 2014 թվականի ողբերգությունը, երբ իր ամուսինը՝ լրագրող Խորխե «Էլ Տոպո» Լոպեսը, մահացավ ավտովթարից. ոստիկաններից փախչող հանցագործների մեքենան բախվել էր նրա տաքսիին: Այդ ծանր օրերին հենց Մեսսին է օգնության ձեռք մեկնել վշտահար ընտանիքին:

«Ես մի քանի օր չէի գրում, բառեր չէի գտնում.... Կյանքիս կեսը ես լուսաբանել եմ Արգենտինայի հավաքականի խաղերը Մեսսիի հետ միասին: Նա մեզ համար ամեն ինչ էր՝ ոգեշնչում, հույս, բնավորության դաս: Լեոյի որպես մարդու հեղինակությունը պարզապես հսկայական է»,- գրում է Բրունատին:

Նա պատմում է, որ ամուսնու մահից հետո Մեսսին իրեն հրավիրել է «Ժոան Գամպեր» մարզաբազա:

«Նա դիմավորեց ինձ, գրկեց ու հարցրեց. «Ի՞նչ կարող եմ անել քեզ, Ագուսի եւ Լուսիայի համար»: Նա հիշում էր երեխաներիս անունները: Ես ապշած էի ու չգիտեի՝ ինչ ասել: Ի՞նչ կարող էի խնդրել Լիոնել Մեսսիից»:

Լեոն պնդել է, որ ցանկանում է անպայման օգնել, ինչին ի պատասխան լրագրողն ասել է.

«Պարզապես եղիր Լիոնել Մեսսի: Երեխաներս ուրախանում են քեզ տեսնելով: Նրանք հիմա շատ են լաց լինում, իսկ ես պարզապես ուզում եմ նորից տեսնել նրանց ժպիտը»:

Մեսսին հրաժարվել է բավարարվել միայն դրանով՝ խնդրելով, որ դժվարությունների դեպքում Վերոնիկան անպայման դիմի իրեն կամ ուղարկի ռեզյումեն իր հորը:

Բրունատին խոստովանում է, որ Մեսսին իրեն ուժ է տվել, երբ այն սպառվել էր, եւ ստիպել է միայնակ՝ երկու փոքրիկների հետ շրջել աշխարհով մեկ՝ լուսաբանելով հավաքականի խաղերը:

«Մեսսին արգենտինացի է, բայց երբեմն մտածում եմ, որ նրան պետք է հռչակել համաշխարհային ժառանգության օբյեկտ: Անգամ եթե նա թողնի ֆուտբոլը, կա մի բան, որ ոչ ոք չի կարող խլել՝ այն երջանկությունը, որ նա պարգեւել է մեզ, երեխաներիս, Էլ Տոպոյին եւ ինձ: Գուցե դա է նրա գլխավոր ժառանգությունը. ոչ թե տիտղոսներն ու ռեկորդները, այլ՝ երջանկությունը»:

ՄՈՆՏԵՍՍՈՐԻԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ CONVERSE LEASING-Ի ԱՋԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Գ

Հայաստանում Մոնտեսսորի մեթոդաբանության պատմությունն արդեն 15 տարվա ճանապարհ ունի: 35 երեխայով իր գործունեությունը սկսած փոքրիկ կենտրոնն այսօր վերածվել է զարգացող կրթական համակարգի՝ երկու կենտրոնով եւ նոր՝ «Մոնտեսսորի Սիթի» մասնաշենքով:

Այստեղ երեխաների զարգացումը կառուցված է ինքնուրույնության, փորձելու եւ սեփական գործողությունների արդյունքը հասկանալու գաղափարի շուրջ: Հատուկ միջավայրը եւ Մոնտեսսորիի մեթոդաբանությանը համապատասխան պարագաները երեխաներին հնարավորություն են տալիս սովորել խաղի, փորձի եւ ամենօրյա գործունեության միջոցով:

Նոր կենտրոնի ստեղծումը պահանջել է նաեւ զգալի ներդրումներ, այդ թվում՝ էներգաարդյունավետ լուծումների ուղղությամբ: Կոնվերս Բանկի հետ համագործակցությամբ մասնաշենքում տեղադրվել են արեւային վահանակներ, որոնք հնարավորություն կտան նվազեցնել էներգիայի ծախսերը եւ խնայված միջոցներն ուղղել կենտրոնի հետագա զարգացմանը:

Իսկ զարգացման հաջորդ նպատակը սեփական դպրոցն է՝ եւս մեկ քայլ դեպի Հայաստանում Մոնտեսորի կրթական միջավայրի ընդլայնում:

conversebank.am, 010 511 211

Կոնվերս Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

● *Հ. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնում սեպտեմբերի 13-ին՝ ժամը 12:00-ին, կկայանա «Եւ նորից Կարմիր Գլխարկ» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Գերմանիայի քաղաքացի եմ, մեկ տարվա ընթացքում քանի՞ անգամ կարող եմ օգտվել ՀՀ գալու առանց մուտքի վիզայի ռեժիմից:

Հարություն Սարգսյան,
54 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Այն պետությունների քաղաքացիները, որոնց համար սահմանված է Հայաստանի Հանրապետություն ժամանելու առանց մուտքի վիզայի ռեժիմ, մուտքերի քանակը սահմանափակված չէ: Միաժամանակ տեղեկացնենք, որ նրանք Հայաստանի Հանրապետության տարածքում մեկ տարվա ընթացքում կարող են մնալ առավելագույնը 180 օր, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ ժամկետ սահմանված չէ:

ՀՀ ազգային
անվտանգության
ծառայության
սահմանապահ զորքեր

Էջը՝ ՄԱՐԻԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ո՞r պարագայում եղբայրները կարող են միեւնույն զորամասում ծառայել:

Նինա Հովակիմյան, 45 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտարարված զորակոչի ընթացքում շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչված եղբայրներն իրենց ցանկությամբ ծառայության են նշանակվում միեւնույն զորամասում: Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող եղբայր ունեցող շարքային կազմի պարտադիր զինծառայողն իր ցանկությամբ ծառայության է նշանակվում եղբոր ծառայության վայրի զորամասում, եթե շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող եղբոր ծառայության ժամկետը չի գերազանցում 17 ամիսը եւ եթե զորակոչվող եղբոր տվյալները բավարարում են տվյալ զորամասում ծառայության անցնելու համար անհրաժեշտ պայմաններին:

Հայաստանի Հանրապետության
պաշտպանության նախարարություն

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի

Սեպտեմբերի 4-ին՝ ժամը 00:05-ի սահմաններում, Արտաշատի խճուղում Սյունիքի մարզի բնակիչն իր վարած «Mercedes GL» մակնիշի ավտոմեքենայով բախվել է բաժանարար գոտու բետոնե արգելապատնեշին եւ հայտնվել դրա վրա:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի
ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	+ 7 + 17 + 19 + 24
	Կոտայքի լեռներ	+ 7 + 10 + 19 + 23
	Կոտայքի նախալեռներ	+ 13 + 15 + 24 + 27
	Գեղարքունիք	+ 7 + 11 + 17 + 21
	Լոռի	+ 9 + 13 + 19 + 23
	Տավուշ	+ 9 + 13 + 20 + 23
	Արագածոտնի լեռներ	+ 7 + 10 + 19 + 23
	Արագածոտնի նախալեռներ	+ 12 + 16 + 23 + 28

	Արարատ	+ 14 + 17 + 26 + 29
	Արմավիր	+ 14+ 17 + 27 + 30
	Վայոց ձորի լեռներ	+ 7 + 10 + 16 + 20
	Վայոց ձորի նախալեռներ	+ 14 + 18 + 27 + 30
	Սյունիքի լեռներ	+ 7 + 10 + 13 + 16
	Սյունիքի նախալեռներ	+ 9 + 12 + 17 + 21
	Սյունիքի հովիտներ	+ 17 + 21 + 24 + 28
	Երեւան	+ 17 + 19 + 32 + 34

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **04.09.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*